

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Րաֆֆի

Ծնած է Փայաջուկ գիւղը, Ատրպատականի Սալմաստ գաւառին մէջ, Պարսկաստան, եւ իր բուն անունն է Յակոբ Մելիք Յակոբեան:

Հայրը հարուստ վաճառական մ'ըլլալով, ուզեց իր տղուն տալ հայեցի դաստիարակութիւն, եւ դրաւ զայն Թիֆլիսի Կարապետ Բելախեանի ուսումնարանը, եւ ապա քաղաքին պետական կիմնագիտը: Սակայն, Րաֆֆի բախտը չունեցաւ ուսումները աւարտելու, որովհետեւ ստիպուեցաւ ընդհատել վարժարանի ընթացքը՝ հորը առեւտրական գործերուն օգնելու համար: Անհատական ջանքն ու ընթերցասիրութիւնը լրացուցին այդ պակասը, եւ այս միջոցով ծանօթացաւ եւրոպական եւ հին դասական գրականութիւններուն գլուխ գործոցներուն, Հոմերոսէ մինչեւ Վիրգիլիոս, Շէքսպիրէն մինչեւ Հիւկոյ՝ բոլոր գրական գեղեցիկ ստեղծագործութիւններուն, Մխիթարեաններու գրաբար թարգմանութիւններէն եւ ռուսերէն լեզուի վերածումներէն:

Շրջեցաւ Թրքահայաստանի գաւառները, ամբարելով նիւթ եւ ատաղձ իր վէպերուն համար, ծանօթացաւ ազգային բարքերուն եւ ժողովուրդին ապրումներուն:

Գրական հրապարակ ելաւ “Հիւսիսափայլ”ի մէջ Աղթամարի վանքին մասին յօդուածով: Ապա կապուեցաւ Գրիգոր Արծրունիի “Մշակ”ին, որպէս մնայուն թղթակից եւ յօդուածագիր: Ատիկա եղաւ իր գրական համբաւին ապահով ճամբան, ինչպէս նաեւ ապրուստի աղբիւր՝ 1868–1872 տարիներուն տնտեսական ճգնաժամային օրեր ապրելէն ետք:

1874–1877 Թարիզի եւ Ագուլիս մէջ ուսուցչութիւն ընելէ ետք, վերջնականապէս նուիրուեցաւ իր վիպական արտադրութեան:

Առաջին գործը եղաւ *Սալբի*, եւ այս վէպէն “Մշակ”ի մէջ լոյս տեսան *Րաֆֆիի Նամակները* շարքը: Րաֆֆին վէպին հերոսներէն մէկն էր, որ յետոյ դարձաւ հեղինակին ծածկանունը. մինչեւ այդ՝ կը ստորագրէր *Մելիքզադէ* ծածկանունով:

Մինչեւ 1877, երբ սկսաւ իր կարեւոր վէպերուն շրջանը, գրած է շարք մը պատմուածքներ ներշնչուած պարսկահայ կեանքէն՝ *Անբախտ Հոփիսիմէ*, *Սովը*, *Գեղեցիկ Վարդիկը*:

*Ջալալէդդին*-ով կը բացուի Րաֆֆիի մեծ վէպերուն շրջանը: Անոր յաջորդեցին *Ոսկի աքաղաղը* (1879), *Խենթը* (1880), *Դաւիթ բէկ* (1881–1882), *Խաչագողի յիշատակարանը* (1883), *Կայծեր* (առաջին հատորը 1883-ին, երկրորդը՝ 1887-ին), *Ղարիպ Մշեցին* (1886), *Սամուէլ* (1888, երեք հատորով), *Պարոյր Հայկազն* (տպուած 1893-ին):

Վէպերէն զատ ունի ուսումնասիրական գործեր, *Խամսայի մելիքութիւնները*, *Հայ կինը եւ հայ երիտասարդութիւնը*, *Արծի Վասպուրականի*, *Տաճկահայք*, ինչպէս նաեւ թարգմանութիւններ:

(Քաղուած Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի “Հայ Գրականութեան Նոր Շրջանի Համառօտ Պատմութիւն” հատորէն)

